

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ**

ՀՀ կրթության և գիտության

նախարար՝

Ա. Աշոտյան

«    » \_\_\_\_\_ 2009 թ.

ՀՀ պետ. գրանցման թ. \_\_\_\_\_

**ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

Մասնագիտությունը՝ 310105 Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և  
գենետիկա

Որակավորման աստիճանը՝ Գյուղատնտեսության բակալավր

Ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

Երևան 2009

1. 310105 -Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա

## ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 1.1. 310105 - Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա

մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. օգոստոսի 30-ին թ. 1038 –Ն որոշմամբ:

#### 1.2. *Շրջանավարտի որակավորումը՝ գյուղատնտեսության բակալավր*

310106 - Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտությամբ գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4 տարի 8 ամիս է:

#### 1.3. *Շրջանավարտի որակավորման բնութագիրը.*

310105 - Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գյուղատնտեսության սելեկցիոներ բակալավրը ԲՈՒՀ-ն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝ գյուղատնտես, գյուղ.մշակաբույսերի սելեկցիոներ, գիտական աշխատող, ավագ լաբորանտ, լաբորանտ և այլն:

##### 1.3.1. *Մասնագիտության գործունեության բնագավառը.*

310105 - Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտությունը առնչվում է գիտության և գյուղատնտեսական արտադրության այն բնագավառներին, որոնք ներառում են գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտերի ստացմանը, փորձարկմանը ու ներդրմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության կազմակերպմանը:

##### 1.3.2. *Մասնագիտական գործունեության օբյեկտները.*

Գիտահետազոտական կենտրոնները և ինստիտուտները, պետական սորտափորձարկման կազմակերպությունները, գյուղացիական /ֆերմերային/ տնտեսությունները, ուսումնական հաստատությունները, մասնագիտությանն առնչվող պետական հանրապետական և մարզային կառույցները:

##### 1.3.3. *Մասնագիտական գործունեության տեսակները.*

310105- Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտությամբ գյուղատնտեսության բակալավրը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված հիմնարար և մասնագիտական պատրաստությանը համապատասխան կարող է կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝

- Սելեկցիոն –սերմնաբուծական բնագավառ
- Գյուղմթերքների արտադրության բնագավառ
- Կենսատեղնոլոգիական բնագավառ
- Բույսերի գենետիկական-բջջաբանական հետազոտությունների բնագավառ
- Գյուղատնտեսական ոլորտի խորհրդատվական –տեղեկատվական բնագավառ:

##### 1.3.4. *Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները.*

310105- Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտությամբ ագրոնոմ սելեկցիոներ բակալավրը, կախված մասնագիտական գործունեության տեսակից, պետք է պատրաստ լինի լուծելու հետևյալ մասնագիտական խնդիրները.

ա/ *Մասնագիտական գործունեության՝*

- օգտագործվող հողատարածությունների պիտանիության գնահատումը՝ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության համար;
- ճիշտ իրականացնի գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաները;
- սերմնաբուծական ցանքերում ընդունված տեխնոլոգիաների ճիշտ կիրառումը;
- կայանային և պետական սորտափորձարկումների գործունեության իմացությունը:

բ/ *Կազմակերպական – կառավարչական.*

- արդյունավետ կազմակերպի դաշտային մշակաբույսերի սերմնաբուծությունը,

հսկողություն սահմանի ցանքանյութի և տնկանյութի պահպանման և որակի նկատմամբ;

- հսկողություն սահմանի կիրառվող միջոցառումների որակի նկատմամբ, որոշի դրանց տեխնիկական և տնտեսական արդյունավետությունը:

*գ/ Գիտահետազոտական գործունեությունը.*

- ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծի գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր բերքատու և որակյալ սորտեր;
- ընդհանրացնի փորձնական ուսումնասիրությունների արդյունքները, ենթարկի դրանք վիճակագրական մշակման, ձևակերպի եզրակացությունները;
- սելեկցիայի բնագավառում օգտագործի գենետիկայի նվաճումները, որոնք հնարավորություն կտան լուծելու այնպիսի արմատական հարցեր, ինչպիսին են՝ բույսերի իմունիտետը, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ դիմացկանության բարձրացումը, ցրտադիմացկունությունը, երաշտադիմացկունությունը, բերքատու հատկանիշների և ստացված բերքի որակի բարձրացումը:
- մեծ տեղ հատկացնի նոր, արժեքավոր սորտերի պահպանման հարցերին, օգտագործելով սերմնաբուծության առաջավոր մեթոդներ:

**1.3.5. Որակավորման պահանջները.**

Մասնագիտական խնդիրները լուծելու նպատակով գյուղատնտեսության բակալավոր կատարում է հետևյալ գործառնությունները.

- ճշտում և իրագործում է գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտերի ստացման էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաները;
- ճշտում և իրագործում է արտադրությանը առաջարկվող նոր սորտերի մշակության էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաներ;
- կոնկրետ տնտեսության կամ տարածաշրջանի համար կատարում է սորտերի ընտրություն, անձնական մասնակցություն է ունենում սերմնաբուծական ցանքերի խնամքի, ապրոբացիայի և բերքահավաքի աշխատանքների: Կազմում է անհրաժեշտ փաստաթղթեր սերմնային և սորտային մաքրության մասին;
- կատարում է հաշվարկներ մշակվող սորտերի տնտեսական արդյունավետության վերաբերյալ;
- ունենա տեսական ու գործնական բարձր պատրաստականություն, կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների նվաճումների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են բուսաբուծության արդյունավետ վարման, նոր սորտերի ստացման ու ներդրման, սերմնաբուծության կազմակերպման, գյուղատնտեսական մշակաբույսերից բարձր ու կայուն բերք ապահովելու համար;
- մասնակցում է գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի և գենետիկայի բնագավառների մասնագիտական խնդիրների առաջադրմանը, ծրագրերի կազմման և լուծմանն ուղղված աշխատանքների բոլոր փուլերին;
- կազմակերպում է նյութերի, միջոցների, սարքավորման, տեխնոլոգիական գործընթացների արդյունավետ օգտագործման գործառնություններ;
- մասնակցում է սելեկցիայի բնագավառի գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և արդյունքների մշակման բոլոր փուլերին;
- ուսումնասիրում է սելեկցիային և գենետիկային առնչվող մասնագիտական գրականությունը և գիտատեխնիկական ինֆորմացիան, ծանոթ է բնագավառի գիտատեխնիկական նորություններին և նվաճումներին;
- օգտվում է ինֆորմացիոն տեխնոլոգիաներից, տվյալների բազաներից, փորձագիտական համակարգերից և կիրառական ծրագրերի փաթեթներից:

*Գյուղատնտեսության բակալավորը պետք է ծանոթ լինի.*

- իր մասնագիտական գործունեության բնագավառին առնչվող օրենքներին, իրավական ակտերին, որոշումներին, կարգադրություններին, մեթոդական և նորմատիվային նյութերին;

- գործող չափանիշներին, բնագավառի սարքավորման, ինֆորմատիկայի միջոցների տեխնիկա-տնտեսական ցուցանիշներին, տեխնոլոգիաներին, դրանց շահագործման կարգացույցներին;
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքով ստացված տվյալների ներկայացման, հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի կազմման եղանակներին;
- աշխատանքային օրենսդրության հիմունքներին, աշխատանքի պաշտպանության նորմերին և կանոններին:

**1.4. Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը**

310105- Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած ագրոնոմ սելեկցիոներ բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու.

- կրճատված ժամկետներում ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան երկրորդ մասնագիտության գծով;
- մագիստրատուրայում ստանալու մագիստրոսի որակավորման աստիճան;
- ասպիրանտուրայում /մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո/ ստանալու գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

**2. Դիմորդի պատրաստականության մակարդակին ներկայացվող պահանջները.**

2.1. Դիմորդի նախորդող կրթական մակարդակը՝ միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն:

2.2. Դիմորդը պետք է ունենա՝

պետական մուշի վկայական միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության կամ միջին մասնագիտական կրթության մասին:

**3. 310105 -Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա** մասնագիտությամբ գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրին ներկայացվող ընդհանուր պահանջները:

3.1. Այուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշիչով և ներառում է մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. Այուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմանների և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

3.3. Այուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը ձևավորվում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացներից:

3.4. Այուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը նախատեսում է հետևյալ կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը.

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական՝ ՀՄՏ;
- ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական՝ ԸԲ;
- ընդհանուր մասնագիտական՝ ԸՄԴ;
- մասնագիտական՝ ՄԴ;
- ֆակուլտատիվ՝ Ֆ;
- ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը:

3.5. գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված որակավորման բնութագրի համաձայն:

**3101065 - ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱ ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ:**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ և ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ /ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ/**

**1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ Ժամ 240**

Ֆիզիկական կուլտուրան ուսանողների ընդհանուր կուլտուրական և մասնագիտական պատրաստվածության գործընթացում: Նրա սոցիալ կենսաբանական հիմքերը: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես հասարակական երևույթներ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ֆիզիկական կուլտուրայի մասին: Անհատի ֆիզիկական կուլտուրան: Ուսանողի առողջ կենսակերպի հիմքերը: Աշխատունակության օպտիմալացման նպատակով ֆիզիկական կուլտուրայի միջոցների օգտագործման առանձնահատկությունները:

Ընդհանուր ֆիզիկական և հատուկ պատրաստությունը ֆիզիկական դաստիարակության համակարգում:

ՄՊՈՐՏ – Սպորտի կամ ֆիզիկական վարժությունների համակարգի անհատական ընտրություն:

Ուսանողների մասնագիտական կիրառական ֆիզիկական պատրաստություն:

Ինքնուրույն պարապմունքների մեթոդիկայի հումունքները, օրգանիզմների վիճակի ինքնավերահսկումը:

**2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Ժամ 120 Կրեդիտ 4**

Պատմական գիտության էությունը, մեթոդները: Առարկայի պարբերացումը, ուսումնասիրության մեթոդները: Հայ ժողովրդի ծագումը և կազմավորումը:

Հին հայկական պետության կազմավորման և զարգացման փուլերը:

Հայ ժողովրդի պայքարը հանուն անկախության վերականգման 5-18-րդ դարերում: Ազատագրական պատերազմները Արցախում և Սյունիքում 1720-ական թվ. և դրանց վախճանը: Հայաստանի ազատագրության ծրագրերը: Հայկական մշակույթը 15-18-

րդ դարերում: Հայաստանը 19-րդ դարի առաջին կեսին: Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը 19-րդ դարի երկրորդ կեսին: Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին: Հայոց ցեղասպանության թուրքական ծրագիրն ու իրագործման փուլերը: Մեծ եղեռնը: 1917 թ. փետրվարյան, հոկտեմբերյան հողափոխությունները և Հայաստանը: Հայաստանի առաջին հանրապետությունն /1918-1920 թթ./: Հայաստանի խորհրդային հանրապետությունը /1920-1940 թթ./: Հանրապետության սոցիալ-տնտեսական հասարակական, քաղաքական կյանքը: Հայ ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին: Հայաստանի Հանրապետությունը 1991-2003 թթ.

**3. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ժամ 120 Կրեդիտ 4**

Լեզվի հիմնական գործառնությունները. լեզուն որպես մարդկային մտածողության արտահայտման ու մտքերի ձևավորման միջոց, որպես հաղորդակցության միջոց, որպես մշակութային արժեքների ստեղծման, պահպանման ու կուտակման միջոց, որպես հասարակական-քաղաքական միտումների կրող:

Աշխարհի լեզուները և լեզվաբնույթները, հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզ-

վարձատանիքում:

Հայոց լեզվի զարգացման պատմական շրջանները /գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայոց լեզու՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ/: Հայոց գիրը և գրչությունը: Մեսրոպյան այբուբենի ստեղծման համազգային պատմական նշանակությունը:

Ուղղագրության, կետադրության և ուղղախոսության ժամանակակից համակարգերը որպես գրավոր և բանավոր խոսքի կարևորագույն չափանիշներ:

Խոսքի կուլտուրայի հիմքերն ու բաղկացուցիչները. ոճաբանություն և ճարտասանական արվեստի հիմունքները:

Ժամանակակից հայերենում ոճի հիմնական տեսակների բնութագրումը. գործառական, իրադրական և անհատական ոճեր:

Գործառական ոճեր:

Առօրյա խոսակցական ոճի ընդհանուր բնութագիրը: Գրական լեզվի ներկա վիճակի և նրա հետագա զարգացման ընթացքի առումով առօրյա խոսակցական ոճի ազդեցության դրական և բացասական միտումները: Ժամանակակից հայոց գրական լեզվի անադարտության պահպանման հիմնական խնդիրները:

Գիտական ոճի ընդհանուր բնութագիրը: Գիտական և կրթական-ուսումնական ոլորտների գործունեության լեզվական-խոսքային չափանիշները:

Վարչագործարարական ոճի ընդհանուր բնութագիրը: Վարչատնտեսական օրենսդիր, օրինաստեղծ և պետական կառավարման, ինչպես նաև քաղաքական, միջազգային, դիվանագիտական ոլորտներում կիրառվող լեզվական-խոսքային չափանիշների առանձնահատկությունները: Այդ ոլորտներին վերաբերող փաստաթղթերի կազմման և դրանց համակարգման հիմնական սկզբունքները: Գովազդային տեքստերի ձևավորման և դրանց մատուցման հիմնական եղանակները:

Հրատարակատեսակական ոճի ընդհանուր բնութագիրը: Հուզական-հոգեբանական ներգործության և փաստարկվածության ու տրամաբանականության մոտեցումների համադրումը որպես այդ ոճի գործառության հիմնական սկզբունք:

Գեղարվեստական ոճի ընդհանուր բնութագիրը: Այդ ոճի հիմնական չափանիշների /գրական լեզվի մաքրությունն ու կատարելությունը, գեղագիտականությունը ևն./ պարզաբանումը հայ և համաշխարհային գրական մեծագույն արժեքների օրինակով:

Ճարտասանական արվեստի պատմության և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ:

Ճարտասանական արվեստի կազմախոսական-բնախոսական հիմքերը. ձայնի դրվածքը, շնչառության տեխնիկան, հնչյունի ձևավորման և արտաբերման տեխնիկան ու կուլտուրան: Խոսքի կազմակերպման հոգեբանական, հուզական և տրամաբանական մեխանիզմները:

Ըստ գյուղատնտեսության ոլորտի առանձին մասնագիտացումների՝ մասնագիտական տերմինների հատուկ բառացանկեր և տեքստեր:

#### **4. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ ժամ 120 Կրեղիտ 4**

Գյուղատնտեսության համար մասնագետներ պատրաստելու խնդիրները որոշարկում են «Ռուսաց լեզու» դասընթացի հաղորդակցական և պրակտիկ բնույթը. անհատական խոսքի և երկխոսության, ընթերցելու և գրելու, ընկալման և խոսակցական ունակությունների ձևավորումը և զարգացումը:

Գործառական-իմաստաբանական հիմքի վրա խմբավորված քերականական գիտելիքների ուսուցումը դիդակտիկ սկզբունքների և ուսումնական նյութի բաշխվածության հաշվառմամբ:

Նվազագույնի հասցված բառային-քերականական նյութի մատուցումը որպես խոսքի կուլտուրայի կատարելագործման, խոսակցական սխալների կանխատեսման և դրանց վերացման լեզվական հիմք:

Ուսուցանվող լեզվի երկրի մշակույթը և ավանդույթները:

Խոսքի բարեկանոնության /կանոնավարության/ տարբեր միջոցների կիրառումը որոշակի իրավիճակներում:

Խոսելու ունակությունը. անհատական խոսքի և երկխոսության կազմակերպումը օգտագործվող պարզ բառային-քերականական միջոցների կիրառմամբ:

Հրապարակային խոսքի հիմունքները /բանավոր հաղորդում,զեկույց ևն./:

Խոսքի ընկալումը. անհատական խոսքի և երկխոսության ըմբռնումը կենցաղային և մասնագիտական հաղորդակցման ոլորտներում:

Ընթերցանություն. տեքստերի տեսակները,ոչ բարդ տեքստեր և մասնագիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքի ունակություն. համառոտագրում, ռեֆերատ, հաղորդում, դրույթներ:

Վարչագործարարական ոճ /դիմում,ստացական,արձանագրություն,տեղեկանք և այլն/:

Ըստ գյուղատնտեսության ոլորտի առանձին մասնագիտացումների՝ մասնագիտական տերմինների հատուկ բառացանկեր և տեքստեր:

## **5. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ (ԱՆԳԼԵՐԵՆ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ)**

**Ժամ 240 Կրեդիտ 8**

Հնչյունների արտասանությա, ինտոնացիայի, շեշտադրական համակարգի և ուսուցանվող լեզվում խոսքի ռիթմի յուրահատկությունը, տառադարձության ընթերցանությունը: Ընդհանուր և տերմինաբանական բնույթի 2000 ուսուցողական բառային միավորով բառապաշարի նվազագույն:Ըստ կիրառման բնագավառի (կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն) հասկացության բառաբաշարների տարբերակման մասին: Հասկացություն բառակազմական հիմնական միջոցների մասին: Հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին:Գրավոր և բանավոր հաղարդակցության ժամանակ առանց իմաստի աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումը ապահովող քերականական երևույթներ: Ուսումասիրվող լեզվի, երկրների մշակույթն ու սովորույթները:Բանավոր խոսքը: Պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ընդհանուր հաղորդակցական իրադրություններում առավել չափով օգտագործվող և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգտագործումը երկխոսության մեջ և անհատական խոսքում: Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց): Ունկնդրում: Կնեցաղային և մասնագիտական հաղորդակցման բնագավառներում երկխոսության և անհատական խոսքի ըմբռնումը: Ընթերցանություն: Տեքստերի տեսակները. ոչ բարդ գործնական բնույթի և լայն մասնագիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքը: Խոսքային ստեղծագործությունների տեսակները, կենսագրություն, փոքր զեկույցներ, անձնական նամակ, գործնական նամակ, ռեֆերատ:

## **6. ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Ժամ 60**

**Կրեդիտ 2**

Մշակութաբանություն և մշակույթի պատմություն: Մշակութաբանական տեսություններ: Մշակույթի կառուցվածք և գործառույթներ: Հոգևոր մշակույթը և նրա տարրերը: Մշակութային ժառանգորդում, նորարարություն, ավանդապահություն: Չանգվածային և էլիտար մշակույթ: Արևելք-Արևմուտք մշակութային առնչություններ: Մշակույթ և քաղաքակրթություն: Նախնադարի մշակույթ և դիցաբանական աշխարհայացք: Արվեստի տեսակների առաջացումը: Հին աշխարհի մշակույթը. Միջագետք, Հնդկաստան, Չինաստան, Եգիպտոս, Հայաստան: Կրոնա-դիցաբանական, կրոնա-փիլիսոփայական համակարգեր և արվեստ: Անտիկ Աշխարհի մշակույթը. Հունաստան, Հռոմ: Կրոնա-դիցաբանական հավատալիքներ և արվեստ:Միջնադարյան մշակույթ և գեղարվեստ:

տական ոճեր: Վերածննդի մշակույթ: հումանիզմն արվեստ: Մշակույթը 17-20-րդ դարերում: Դարաշրջաններ և գեղարվեստական ուղղություններ:

«Մշկութաբանություն» առարկայի դասընթացը նպատակ է հանդիսանում ուսանողության մշակութաբանական զգացողության դաստիարակության գործում, ձևավորում նրանց մեջ մի ներ գիտակցություն, առանց որի անհնար է մարդկային կյանքը, մարդու գործունեությունը մշակույթից դուրս:

**8. ԶԱՂԱԶԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Ժամ 90 Կրեղիս 3**

Քաղաքագիտության օբյեկտը և առարկան, մեթոդները և գործառույթները: Քաղաքագիտության և այլ հասարագիտական առարկաների փոխհարաբերությունները: քաղաքական ուսմունքների զարգացման հիմնական փուլերը: Քաղաքագիտություն և քաղաքական իշխանություն: Քաղաքական համակարգ: Քաղաքական ռեժիմ (վարչակարգ): Դեմոկրատիայի ժամանակակից տեսություններն ու մոդելները: Պետություն, գործառույթները, ձևերը: Պետական իշխանության մարմինները Հայաստանում: Իրավական և սոցիալական պետություն: Խորհրդարան և խորհրդարանականություն: Կառավարման նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական ձևերի համեմատական վերլուծությունը:

Քաղաքական իշխանության սոցիալական սուբյեկտները: Շահերի խմբեր, քաղաքական լիդերություն և քաղաքական լիդերներ, էլիտա: Ընտրություններ և ընտրական համակարգեր: ՀՀ ընտրական համակարգը: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Բազմակուսակցական համակարգի կայացումը Հայաստանում: Համաշխարհային քաղաքական գործընթացներ և միջազգային հարաբերություններ: Քաղաքական գլոբալիստիկա: Քաղաքական կանխատեսում:

**9. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Ժամ 120 Կրեղիս 4**

Պետությունն ու իրավունքը: Դրանց դերը հասարակության կյանքում: Պետության և իրավունքի ծագումը, էությունը, հատկանիշները, գործառույթները, կառուցակարգը, ձևերը: Իրավունքի նորմերը և աղբյուրները: Նորմատիվային իրավական ակտերի հասկացությունը, տեսակները: Օրինականության հասկացությունը: Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգը: Իրավունքի ճյուղերը:

Սահմանադրական իրավունք:

Քաղաքացիական իրավունք:

Հեղինակային իրավունք:

Աշխատանքային իրավունք:

Վարչական իրավունք:

Քրեական իրավունք:

Հողային իրավունք: ՀՀ Հողային օրենսդրությունը:

Իրավակարգի պահպանության և հանցավորության դեմ պայքարող մարմինների խնդիրներն ու համակարգը: Արտադրությունը և դրա խնդիրները:

Քաղաքացիական դատավարության իրավունքը: Քրեական դատավարության իրավունքը: Միջազգային իրավունք: Միջազգային իրավունքի սկզբունքները և սուբյեկտները: Միջազգային պայմանագրեր: Միջազգային իրավունքի աղբյուրները:

**10. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ Ժամ 120 Կրեղիս 4**

Փիլիսոփայության առարկան: Փիլիսոփայության ձևավորումը: Փիլիսոփայական գիտելիքների կառուցվածքը: Փիլիսոփայության տեղը և դերը գիտության ու մշակույթի ոլորտում: Փիլիսոփայության զարգացման հիմնական փուլերը: Ուսմունք կեցության մասին: Օրենք և օրինաչափություն: Գիտակցություն: Նյութականը և իդեալականը: Գիտակցականը և անգիտակցականը: Լեզու և մտածողություն: Ճանաչողություն: Ճշմարտության հիմնախնդիրը:



Գիտական ճանաչողության կառուցվածքը:

Մարդու կեցության իմաստը: Մարդը սոցիալական միջավայրի արդյունք, կենսաբանական, հոգեկան նախահիմքերի ամբողջություն:

Բնություն և հասարակություն: Հասարակության դասային շերտավորման հիմքերը: քաղաքացիական հասարակություն և պետություն: Ազատություն և անհրաժեշտություն: Հասարակության զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Սոցիալական հեղափոխություն: Փիլիսոփայության հիմնական ուղղությունները և դարձերը: 20-րդ դարի փիլիսոփայական հիմնական հոսանքները: Կենսաբանության և էկոլոգիայի փիլիսոփայական հիմնախնդիրները: Էկոլոգիան և քաղաքականությունը: Էկոլոգիական աղետ: Բնապահպանական շարժումներ:

**11. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ Ժամ 120 Կրեդիտ 4**

Տնտեսագիտության տեսության հիմունքները:

Միկրոտնտեսագիտություն: Շուկա: Առաջարկ և պահանջարկ:

Ձեռնարկություն: Հասույթը և շահույթը: ձեռնարկատիրություն: Շահույթի մաքսիմալացման սկզբունքը, կատարյալ մրցակցային ֆիրմայի և ճյուղի առաջարկը: մրցակցային շուկաների արդյունավետությունը: Մենաշնորհ: Մենաշնորհատիրական մրցակցություն: Օլիգոպոլիս: Հակամենաշնորհային կարգավորում: Արտադրության գործոնների նկատմամբ պահանջարկը: Աշխատանքի շուկա: աշխատանքի առաջարկը և պահանջարկը: Աշխատավարձ և զբաղվածություն: կապիտալի շուկա: Տոկոսադրույք և ինվեստիցիա: Հողի շուկա: Ռենտա: Ընդհանուր հավասարաշռություն և բարեկեցություն: Եկամտների բաշխում: Անհավասարություն: Արտաքին Էֆեկտներ և հասարակական բարիքներ: Պետության դերը: Մակրոտնտեսագիտություն: ազգային տնտեսությունը որպես ամբողջություն: ՀՆԱ-ն և նրա չափման եղանակները: Ազգային եկամուտ: Տնօրինվող անձնական եկամուտ: Գների ինդեքսները: գործազրկությունը և նրա ձևերը: Ինֆլյացիան և նրա տեսակները: Տնտեսական պարբերաշրջանները: Մակրոտնտեսական հավասարակշռություն: Ամբողջական առաջարկ և ամբողջական պահանջարկ: Կայունացման քաղաքականություն: Հավասարակշռությունը ապրանքային շուկայում:

Մալառում և խնայողություն: Ինվեստիցիա: պետական ծախսեր և հարկեր: Մուլտիպլիկատորի Էֆեկտը: Հարկաբյուջետային քաղաքականություն:

Փողը և նրա ֆունկցիաները: հավասարակշռությունը փողի շուկայում: փողային մուլտիպլիկատորը: Բանկային համակարգ: Դրամավարկային քաղաքականություն: Տնտեսական աճ և զարգացում: Միջազգային տնտեսական հարաբերություններ: Արտաքին առևտուր և արտաքին քաղաքականություն: Վճարային հաշվեկշիռ: Տարադրամի կուրսը: Անցման շրջանի առանձնահատկությունները Հայաստանում: Սոցիալական ոլորտի վերափոխումները: Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը: Բաց էկոնոմիկայի ձևավորումը:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ /ԲՈՒՀԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ/**

**1. ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ Ժամ 120 Կրեդիտ 4**

Նախաբան (մաթեմատիկայի դերը բնական գիտությունների զարգացման մեջ): Անալիտիկ երկրաչափության և գծային հանրահաշվի տարրերը: Մաթեմատիկական անալիզի հիմունքները, սահմանների տեսությունը: Մեկ և մի քանի փոփոխականների ֆունկցիայի դիֆերենցիալ հաշիվ: Ինտեգրալ հաշվի հիմունքները և դրանց կիրառությունները: Առաջին կարգի դիֆերենցիալ հավասարումներ: Հավանականության տեսության հիմունքները:

**2.. ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**  
**Ժամ 180 Կրեղիս 6**

Ինֆորմատիկայի զարգացման հիմնական փուլերը, ուղղություններն ու բովանդակությունը: Ընդհանուր տեղեկություններ դասընթացի մասին: Դասընթացի առարկան, խնդիրները, նպատակը և դերը: Գաղափար ինֆորմացիայի և տվյալների մասին: Տվյալների տեսակները: Հաշվիչ (հաշվողական) մեքենայի, տեխնիկայի և ցանցերի բնութագրերը: Համակարգիչների թվաբանական հիմունքները: Համակարգիչների տրամաբանական հիմունքները: Ինֆորմացիայի չափման ու պահպանման միավորները: Համակարգիչների հիմնական տարրերը, հանգույցները, բլեկները և ֆունկցիոնալ սարքերը, դրանց նշանակությունը, հիմնական բնութագրերը և ընդհանուր կառուցվածքը: Կենտրոնական պրոցեսոր, հիշասարքեր, արտաքին սարքեր: Տեսատիպ, ստեղնաշար, տպիչ, մոդեմ, ֆաքս-մոդեմ, ջոյստիկ, մկնիկ, սկաներ: Համակարգչի միացման, սկզբնական բեռնավորման և անջատման կարգը: Ալգորիթմի հասկացողությունը և հատկությունները, հաշվողական պրոցեսների տեսակները: Ալգորիթմի ներկայացման բառային, բառաբանաձևային, գծապատկերային և ծրագրային եղանակները: Գծային, ճյուղային և ցիկլային կառուցվածքով ալգորիթմների նկարագրում: Ալգորիթմի մշակման փուլերը: Համակարգային ծրագրային ապահովումը, նշանակությունն ու ֆունկցիաները: Օպերացիոն համակարգեր, Windows օպերացիոն համակարգ, կիրառական ծրագրեր (Word, Excel, Paint), ծրագրավորման համակարգեր (BASIC, C++): Դրանց նշանակությունը, գործածման և կիրառման մեթոդները: Ծրագրավորման լեզուների դասակարգումը: Ծրագրավորման լեզուների տարրերը: Basic լեզվի ալբոմները, տվյալների տեսակները, նույնարկիչները, ծառայողական բառերը և ստանդարտ ֆունկցիաները: Լեզվի արտահայտությունները, օպերատորները:

**3.. ՖԻԶԻԿԱ ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ** **Ժամ 150 Կրեղիս 5**

Կինեմատիկա, դինամիկա, հարաբերականության տեսության էլեմենտները: Հեղուկների և գազերի շարժումը, մոլեկուլյար ֆիզիկա, էլեկտրաստատիկա: Հաստատուն հոսանքի օրենքները: Էլեկտրամագնիսականություն, Օպտիկա, ատոմի և միջուկային ֆիզիկա: Հիդրոդինամիկա: Պուազեյի և Ստոքսի օրենքները, լամինար և տուրբուլենտ հոսքեր: Ակուստիկայի ֆիզիկական հիմունքները, ուլտրաձայնը և նրա ազդեցությունը կենսաբանական համակարգերի վրա: Ստացիոնար վիճակները կենդանի օրգանիզմներում: Էներգիայի փոփոխությունը կենդանի օրգանիզմներում: Կոնդենսատորներ: Կենսաբանական կոնդենսատոր: Բևեռացման երևույթները կենսաբանական հյուսվածքներում: Հասկացողություն ֆոտոկենսաբանական ռեակցիաների մասին: Լազեր, Լազերային ճառագայթումը կենսաբանության մեջ:

**4.. ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ** **Ժամ 120 Կրեղիս 4**

Ատոմի կառուցվածք՝ միջուկի բաղադրությունը, իզոտոպներ: Ատոմի էլեկտրոնային թաղանթների կառուցվածքը: Պարբերական օրենք և համակարգ: Քիմիական կապ: Քիմիական հավասարակշռություն: Էլեկտրոլիտների և ոչ էլեկտրոլիտների լուծույթներ: Քիմիական կինետիկա և կատալիզ: Կենսածին տարրերի քիմիա: Ստացման եղանակները, ստացումը, կիրառումը գյուղատնտեսությունում:

**5. ԱՆԱԼԻՏԻԿ ՔԻՄԻԱ** **Ժամ 60 Կրեղիս 2**

Որակական անալիզ: Կատիոնների և անիոնների անալիտիկ խմբերը: Խմբակային ռեակտիվներ: Կատիոնների և անիոնների մասնակի ռեակցիաներ: Քանակական անալիզ: Թթվա-հիմնային տիտրում: Թթվաչափություն և հիմքաչափություն:

Յողաչափություն: Կոմպլեքսոմետրիա: Հասկացություն անալիզի ֆիզիկա-քիմիական եղանակների վերաբերյալ: Կոլորիմետրիա:

**6. ՕՐԳԱՆՍԱԿԱՆ ՔԻՄԻԱ** **Ժամ 120** **Կրեդիտ 4**

Ածխաջրածիններ: Սպիրտներ: Օքսոմիացություններ: Կարբոնաթթուներ (միահիմն, երկհիմն, հազեցած, չհազեցած, օքսի-, օքսոթթուներ), ճարպեր: Ածխաթթվի ածանցյալները: Ածխաջրեր: Ազոտի միացություններ: Ամիններ, ամինաթթուներ, սպիտակուցներ: Հետերոցիկլեր: Ալկալոիդներ:

**7. ՖԻԶԿՈԼՈՒԴ ՔԻՄԻԱ** **Ժամ 60** **Կրեդիտ 2**

Քիմիական թերմոդինամիկա, թերմոքիմիա: Ռեակցիաների կինետիկական դասակարգումը: Լուծույթների հատկությունները՝ էլեկտրահաղորդականություն: Էլեկտրաքիմիա: Դիսպերս համակարգեր: Ադսորբցիա, նրա տեսակները: Ջուլերի ստացումը, հատկությունները: Միցելի կառուցվածքը, կոագուլում: Բարձրամոլեկուլային միացությունների լուծույթները, նրանց հատկությունները: Կոպիտոդիսպերս համակարգեր՝ սուսպենզիաներ, էմուլսիաներ, փոշիներ, փրփուրներ, ծուխ – ստացումը, հատկությունները:

**8. ԱԳՐՈՒԿՈԼՈԳԻԱ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ** **Ժամ 120** **Կրեդիտ 4**

Կենսալորտը և մարդը: Էկոհամակարգեր, օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունները: Ագրոէկոհամակարգերը և դրանց գործելակերպը տեխնոգենեզիսի պայմաններում: Շրջակա միջավայրի գյուղատնտեսական հիմնախնդիրները: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնության պահպանության էկոլոգիական սկզբունքները: Միջազգային համագործակցությունը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները: Մթնոլորտի օդի, ջրի, հողերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը և դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները: Քիմիացման էկոլոգիական հիմնախնդիրները: Հողա-կենսաբանական համալիրը և ագրոէկոհամակարգերի կայունությունը: Բույսերի պաշտպանության կենսաբանական պայքարը և շրջակա միջավայրը: Երկրագործության ավանդական և այլընտրանքային համակարգերը: Կենսաբազմազանությունը և էկոհամակարգերի կայունությունը: Էկոլոգիական տեսակետից անվտանգ գյուղատնտեսական մթերքների արտադրության տեխնոլոգիաները: Կայուն էկոհամակարգերի ստեղծման սկզբունքները: Ռեսուրսախնայողական տեխնոլոգիաները գյուղատնտեսության մեջ: Ագրոէկոլոգիական մոնիթորինգ, տարածքների էկոլոգիական վիճակի գնահատումը: Էկոլոգիական քաղաքականությունը և գյուղատնտեսության էկոլոգիացման հիմնախնդիրները:

**9. ԳԵՆԵՏԻԿԱ** **Ժամ 120** **Կրեդիտ 4**

Գենետիկա առարկան, համառոտ պատմությունը, հետազոտությունների մեթոդները, գիտգործնական նշանակությունը և կապը մյուս կենսաբանական գիտությունների հետ: Գենետիկայի բջջբանական և մոլեկուլային հիմունքները: Հատկանիշների ժառանգման օրինաչափությունները սեռական և անսեռ բազմացման ժամանակ: Մենդելիզմ, ալելային և ոչ ալելային գեների փոխազդեցության ձևերը: Ժառանգականության քրոմոսոմային տեսությունը: Մորգանի օրենքը, հատկանիշների լրիվ և ոչ լրիվ շրթակայակցման ձևով ժառանգումը: Փոփոխականություն, դասակարգումը, պոպուլյացիոն գենետիկա: Հեռավոր հիբրիդացում: Գենետիկական գործընթացները պոպուլյացիայի մեջ: Օնոթոգենեզի գենետիկական հիմունքները:

**10. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ Ժամ 150 Կրեդիտ 5**

Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգը, խնդիրներն ու նշանակությունը: Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքն ու կազմավորումները: Արտակարգ իրավիճակներ, դրանց դասակարգումը: Ռ-ադիացիոն և քիմիական վարակվածության օջախները: Տեղանքի ռադիոակտիվ վարակում, ռադիոակտիվ վարակվածության աղբյուրները: Ռ-ադիացիոն և քիմիական իրադրության գնահատման մեթոդները: Բնակչության և բույսերի պաշտպանության կազմակերպումը արտակարգ և պատերազմական իրավիճակներում: Անհատական պաշտպանական միջոցների տեսակները: Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում գյուղատնտեսական օբյեկտների գործունեության կայունության ապահովման հիմնական ուղղություններն ու մեթոդները: Գյուղատնտեսության վարումը ռադիոակտիվ վարակվածության պայմաններում:

**11. ԳՅՈՒՂ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 60 ժամ Կրեդիտ 2**

Գյուղ.արտադրությունում օգտագործվող տրակտորների ընդհանուր կառուցվածքը, տեխնիկատնտեսական ցուցանիշները: Հողամշակող, ցանքի ու տնկման, բույսերի խնամքի ու պաշտպանության, կերերի հավաքման ու հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի, հացահատիկի գտման ու տեսակավորման, ինչպես նաև մելիորատիվ մեքենաների կառուցվածքը և աշխատանքը: Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործում:

**12. ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ժամ 60 Կրեդիտ 2**

Մարդ - մեքենա - միջավայր համակարգը:

Կենսագործունեության անվտանգության բնագավառի վերաբերող նորմատիվաիրավական փաստաթղթերը, հիմնական օրենսդրական ակտերը, աշխատանքային, քաղաքացիական և քրեական օրենսգրքերը: Կենսագործունեության անվտանգության ծառայության կառուցվածքը: Արտադրական վնասվածության և մասնագիտական հիվանդությունների ուսումնասիրման մեթոդները: Աշխատատեղերի օդերևույթաբանական և միկրոկլիմայական պարամետրերի նորմավորման սկզբունքները: Անվտանգությունը թունաքիմիկատների և պարարտանյութերի տեղափոխման, օգտագործման և պահպանման ընթացքը: Էլեկտրահարվածից պաշտպանվելու կազմակերպչական միջոցառումները: Ամպրոպապաշտպանություն: Շենքերի և շինությունների հրակայունությունը, դրա բարձրացման եղանակները:

Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգը, խնդիրներն ու նշանակությունը: Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքն ու կազմավորումները: Արտակարգ իրավիճակներ, դրանց դասակարգումը: Ռ-ադիացիոն և քիմիական վարակման օջախներ: Տեղանքի ռադիոակտիվ վարակում, ռադիոակտիվ վարակվածության աղբյուրները: Ռ-ադիացիոն և քիմիական իրադրության գնահատման մեթոդներ: Բնակչության և բույսերի պաշտպանության կազմակերպումը արտակարգ և պատերազմական իրավիճակներում: Անհատական պաշտպանական միջոցների տեսակների: Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում գյուղատնտեսական օբյեկտների գործունեության կայունության ապահովման հիմնական ուղղություններն ու մեթոդները: Գյուղատնտեսության վարումը ռադիոակտիվ աղտոտվածության պայմաններում:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ  
ԿԻԹԱԲԼՈԿ /ԲՈՒՀԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ/**

**1. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Ժամ 240 Կրեդիտ 8**

Սերմնավոր բույսերի անատոմիա և ձևաբանություն (մորֆոլոգիա): Բուսական բջիջ: Կառուցվածքային մասերը, օրգանոիդները և կենսագործունեությունը: Հյուսվածքաբանություն (հիստալոգիա): Հյուսվածքների տիպերը, նրանց կատարած ֆունկցիաները: Բույսերի վեգետատիվ օրգանները: Արմատ, ընձյուղ, տերև և ցողուն, դրանց կառուցվածքը ու ձևափոխությունները (մետամորֆոզները): Բույսերի բազմացման եղանակները: Վեգետատիվ, անսեռ և սեռական բազմացումներ: Բույսերի կարգաբանություն (սիստեմատիկա): Բուսական աշխարհի սիստեմը և նրա էվոլյուցիան: Ստորակարգ բույսեր (բակտերիաներ, ջրիմուռներ, լորձուկներ (միքսոմիցենտներ), սնկեր և քարաքոսեր): Բարձրակարգ սաղմնավոր բույսեր (մամռանմաններ, պտերանմաններ, սոճանմաններ և մագնոլիանմաններ): Ծաղիկներ, ծաղկաբույլեր, սերմեր և պտուղներ, դրանց կառուցվածքը ու տիպերը: Ծաղկավոր բույսերի դասերը, դրանց մեջ մտնող ընտանիքները: Բույսերի էկոլոգիա (միջավայրագիտություն): Աբիոտիկ, բիոտիկ և անթրոպոգեն գործոններ: Բույսերի աշխարհագրություն (ֆլորիստիկա): Տարրերը: Հայաստանի ֆլորան և բուսականությունը:

**2. ԲՈՒՅՍԵՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ Ժամ 180 Կրեդիտ 6**

Բուսական բջիջի ֆիզիոլոգիան և բիոքիմիան առանձնահատկություններ, ֆոտոսինթեզ, շնչառություն, ջրային փոխանակություն, բույսերի հանքային սննդառություն, օրգանական նյութերի փոխանակությունը և տեղաշարժը, աճ և զարգացում, հարմարվողականություն և տոկունություն, բերքի որակի ձևավորում:

**3. ԿԵՆՍԱՔԻՄԻԱ Ժամ 120 Կրեդիտ 4**

Բջջի քիմիական կազմ: Նյութափոխանակության պրոցես: Կենսաքիմիական պրոցեսների ընդհանրություն: Օրգանիզմների կենսասինթետիկ ակտիվություն: Ժառանգական ինֆորմացիայի փոխանակում: Օրգանիզմի հարմարվողական և պաշտպանողական մեխանիզմներ:

**4. ՄԱՆՐԷԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Ժամ 120 Կրեդիտ 4**

Ներածություն: Մանրէների մորֆոլոգիան և ֆիզիոլոգիան, մանրէների մետաբոլիզմը, դասակարգումը: Արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը մանրէների կենսագործունեության վրա: Մանրէների միջոցով ածխածնային, ազոտային և այլ միացությունների փոխակերպումը:

Հողի մանրէները և նրանց դերը բերրիության բարձրացման համար: Ագրոտեխնիկական տարբեր միջոցառումների ազդեցությունը մանրէների կենսագործունեության վրա: Մանրէների միջոցով բակտերիալ պարարտանյութերի ստացումը և օգտագործումը: Հողում պեստիցիդների քայքայումը մանրէների միջոցով: Ջրի և օդի միկրոֆլորան: գոմաղբի հասունացման միկրոբիոլոգիական հիմունքները:

Էպիֆիտային և ռիզոֆերային միկրոֆլորան նրանց նշանակությունը: Կենսապատրաստուկները և նրանց օգտագործումը բույսերի պաշտպանությունում: Կերերի միկրոբիոլոգիան, պտուղների և բանջարեղենների էպիֆիտ միկրոֆլորան, դրանց նշանակությունը պահպանման և վերանշակման համար:

**5. ԱԳՐՈՂԵՐԵՎՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Ժամ 120 Կրեդիտ 4**

Մթնոլորտ, մթնոլորտային ճնշում, ճնշման փոփոխությունը ըստ բարձրության և հորիզոնական ուղղությամբ, ճնշումային համակարգեր, օդային հոսանքներ, արեգակնային ճառագայթաբաժակումը և նրա արդյունավետ օգտագործման ուղիները գյուղատնտեսական արտադրությունում, հողի և օդի ջերմաստիճանների գյուղատնտեսական նշանակությունը, ակտիվ և էֆեկտիվ ջերմաստիճաններ, ջուրը մթնոլորտում և հողում, գոլորշիացում, ամպեր, տեղումներ, եղանակը և նրա կանխատեսումը, Հայաստանի բնակլիմայական առանձնահատկությունները, գյուղատնտեսության համար վտանգավոր երևույթները և պայքարը նրանց դեմ, ագրոօդերևութաբանական կանխագուշակումներ:

**6. ԴԱՇՏԱՅԻՆ ՓՈՐՉԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱ**

**ժամ 120 Կրեդիտ 4**

Գիտական ագրոնոմիայի հետազոտությունների մեթոդները: Ընդհանուր հասկացություն հետազոտությունների և դրանց դասակարգման մասին: Դաշտային փորձերի մեթոդիկայի հիմնական տարրերը: Գյուղատնտեսական փորձերի պլանավորումը, դիտումներ և հաշվառումներ: փորձերի տեղադրումը և կատարումը: Փաստաթղթերի ձևակերպումը և հաշվետվություններ: Վիճակագրական մեթոդների անալիզի կիրառումը, ամբողջություն և ընտրանք, տեսական և փորձնական բաշխումներ: Գիտական երկրագործության (հիպոթեզ) վիճակագրական ստացումը: Դիսպերսիոն անալիզ: Պրակտիկա:

**7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԷՆՏՈՍՈՒՈՒԿԻԱ**

**90 ժամ Կրեդիտ 3**

Միջատների մորֆոլոգիան, անատոմիան և ֆիզիոլոգիան, միջատների պոպուլյացիաների հատկությունները (միջտեսակային, ներտեսակային և ներպոպուլյացիոն), միջատների բազմացումը և զարգացումը, միջատների էկոլոգիան նրանց դասակարգումը, գ/տ մշակաբույսերի վնասատուների կենսաբանական առանձնահատկությունները, հասցրած վնասի բնույթը և չափերը, պայքարի մեթոդները և բույսերի պաշտպանության համակարգ վնասատուների դեմ:

**8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՖԻՏՈՊԱԹՈՒՈՒԿԻԱ**

**90 ժամ Կրեդիտ 3**

Բույսերի հիվանդությունների դասակարգումը: Ոչ վարակիչ հիվանդություններ, նրանց առաջացման պատճառները, վարակիչ հիվանդությունների գլխավոր խմբերը (վիրուսներ, բակտերիաներ, միկրոպլազմաներ, ճառագայթասնկեր, սնկեր), բույսերի վարակիչ հիվանդությունների էկոլոգիան և զարգացման դինամիկան, հիվանդությունների կանխատեսում և ահագանգում, գ/տ մշակաբույսերի հիվանդությունները, հարուցիչների կենսաբանական առանձնահատկությունները, հասցրած վնասի բնույթը և չափերը, բույսերի պաշտպանության համակարգ գ/տ մշակաբույսերի հիվանդությունների դեմ: Լաբորատոր պարապմունքներ:

**9. ԲՈՒՅՄԵՐԻ ԶԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**90 ժամ Կրեդիտ 3**

Պեստիցիդների դասակարգումը: Ագրոնոմիական թունագիտության հիմունքները: Պեստիցիդների ազդեցությունը շրջակա միջավայրի և պաշտպանվող բույսերի վրա: Պեստիցիդների կիրառման առանձնահատկությունները: Վնասատուների, հիվանդությունների և մոլախոտային բուսականության դեմ կիրառվող պայքարի քիմիական միջոցներ (ինսեկտիցիդներ, ակարիցիդներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ), դրանց ծախսի նորմաները, կիրառման ժամկետները և եղանակները: Պայքարի ինտեգրացված մեթոդը, դրա դերը:

**10. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ՄԱՐԶԵԹԻՆԳ**  
**Ժամ 90 Կրեդիտ 3**

Հողային և արտադրական ֆոնդերը, աշխատանքային ռեսուրսները, արտադրության ծախսերը, ճյուղային էկոնոմիկայի հիմունքները, բուսաբուծական արտադրանքի արտադրության էկոնոմիկա:

Մարքեթինգի դերն ագրոպարենային համակարգում: Մարքեթինգի գործառնություններն ու շուկայաբանական հետազոտությունները:

**11. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**  
**Ժամ 60 Կրեդիտ 2**

Արտադրության կազմակերպման օրինաչափությունները, սկզբունքներն ու ձևերը: Արտադրության պլանավորման հիմունքները: Արտադրության միջոցների օգտագործումը: Աշխատանքի կազմակերպման հիմունքները: Բուսաբուծության ճյուղերի կազմակերպումը: Ձեռնարկատիրական գործունեության բովանդակությունը և տեսակները: Բիզնես պլան, լիզինգ և առևտրային գործունեություն:

Կառավարման էությունը, գործառնությունները, մեթոդները, գործընթացները: Անձնակազմի կառավարումը, արտադրության կառավարումը, որակի համակարգի կառավարումը: Ագրարային ոլորտի կազմակերպությունների կառավարման համակարգի կառավարումը: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման հիմունքները: Ագրոպարենային համակարգի կառավարումը և կառավարման արդյունավետությունը:

**12. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ** Ժամ 60 Կրեդիտ 2

Հաշվապահական հաշվառման հասկացությունը: Դրամական միջոցների և հաշվարկների հաշվառման հիմունքները:

**13. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԲԻՈՍԵՏՐԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ** Ժամ 60 Կրեդիտ 3

Ծրագրում գետեղվել են այն հիմնական հարցերը, որոնք վերաբերում են ժամանակակից վիճակագրության և բիոմետրիայի հիմունքներին: նրա առաջին մասում արտացոլված են «Վիճակագրության և բիոմետրիայի ընդհանուր տեսության» իսկ երկրորդ մասում՝ «Բիոմետրիայի», որպես գիտություն, հիմունքները:

«Վիճակագրության և բիոմետրիայի ընդհանուր տեսության» մեջ պարզաբանվում են գիտության առարկան, մեթոդը, խնդիրները, ուսումնասիրվում են վիճակագրական չափորոշիչները, վիճակագրական տվյալների դիտարկման, ամփոփման և խմբավորման մեթոդաբանությունը, միջին և վարիացիայի ցուցանիշների, փոխկապակցությունների և դինամիկայի վերլուծությունը:

Բիոմետրիայում օգտագործվում են մաթեմատիկական - վիճակագրական հետևյալ կարևոր մեթոդները.

-սկզբնական տվյալների խմբավորումը և ընտրանքային մեթոդը, վարիացիայի ցուցանիշները և միջին մեծությունները, բաշխման օրենքների ստուգման հիպոթեզները, կոռելացիոն և ռեգրեսիոն վերլուծությունը, հետազոտությունների պլանավորման հարցեր:

**14. ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** Ժամ 120 Կրեդիտ 4

Երկրաբանության հիմունքները հողագոյացման գործընթաց; հողի մորֆոլոգիական (ձևաբանական) հատկանիշները, հողի կազմը, հատկությունները և բերրիությունը, հողերի ծագումը և զարգացումը (էվոլյուցիան), հողերի կարգաբանման սկզբունքները; հողային ծածկույթի ստրուկտուրան (կառուցվածքը), հողերի բնութագիրը, աշխարհագրությունը և գյուղատնտեսական օգտագործումը; հողի էրոզիան; հողային քար-

տեզներ և քարտոգրամներ; հողերի ագրոէկոլոգիական գնահատականը, հողային տիպերի կարգաբանումը, պրակտիկա:

**15. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Ժամ 180 Կրեդիտ 6**

Երկրագործության գիտական հիմունքները, բույսերի կյանքի գործոնները և երկրագործության օրենքները, գյուղատնտեսական բույսերի կյանքի պայմանների օպտիմալացումը, հողերի բերրիության վերարտադրումը երկրագործության մեջ, մոլախտատային բուսականությունը և պայքարի միջոցառումները նրանց դեմ, ցանքաշրջանառություններ, նրանց դասակարգումը և կազմակերպումը, հողի մշակումը և նրա հողապահպան ուղղվածությունը, հողը էրոզիայից պահպանելը, հողի մշակման առանձնահատկությունները լեռնային ռելիեֆի պայմաններում:

**16. ԱԳՐՈՔԻՄԻԱ Ժամ 120 Կրեդիտ 4**

Ագրոքիմիայի բնորոշումը: Պարարտանյութերի կիրառման նշանակությունը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում: Բույսերի ագրոքիմիա: Հանքային տարրերի կենսաբանական նշանակությունը, բույսերի արմատային համակարգի գործունեությունը սննդանյութերի կլանման գործում, պարարտանյութերի ֆիզիոլոգիական ռեակցիաներ:

Սննդալուծույթներ, հիդրոպոնիկա:

Հողի ագրոքիմիա: Ազոտի, ֆոսֆորի և կալիումի ձևափոխությունները հողում:

Հողերի քիմիական մեխորացիա:

ՀՀ հողերի ագրոքիմիական բնութագիրը:

Գործարանային պարարտանյութեր: Տեղական /օրգանական/ պարարտանյութեր:

Պարարտացման համակարգի հիմնական օղակները: Առանձին մշակաբույսերի պարարտացման համակարգի նախագծումը ծրագրավորվող բերք ստանալու համար:

**17. ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ Ժամ 60 Կրեդիտ 2**

Մեղվաբուծություն: Մեղվաընտանիքի կազմը, մեղվի մորֆոլոգիական առանձնահատկությունները, աշխատանքի բաժանումը, մեղվի կերը, բազմացումը, մեղվաընտանիքի կյանքը ձմռանը, ձմեռային կծիկի ձևավորումը: Փեթակներ, գույք և մեղվանոցային կառույցներ, մեղվաընտանիքների բուծումը և կառուցվածքը: Մեղուների կերի բազան: Մեղուների միջոցով գյուղատնտեսական բույսերի փոշոտումը, մեղուների հիվանդությունները և վնասատուները, մեղվաբուծական տնտեսությունների էկոնոմիկան և կազմակերպումը:

**18. ՄԱՐԳԱԳԵՏՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ Ժամ 90 Կրեդիտ 3**

Մարգագետնային կերարտադրության խնդիրները: Բնական խոտհարքներում և արտավայրերում տարածված խոտաբույսերի կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները: Բնական կերհանդակները և նրանց դասակարգումը: Խոտհարքների և արտավայրերի մակերեսային բարելավման եղանակները: Արոտավայրերի արմատական բարելավումը, նրանց արդյունավետ օգտագործումը: Արոտավայրերում կիրառվող ընթացիկ խնամքի աշխատանքների կազմակերպումը: Բազմամյա խոտաբույսերի սերմնաբուծությունը և նրա խնդիրները:



**19. ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Ժամ 60**

**Կրեդիտ 2**

Գիտականորեն հիմնավորված ցանքաշրջանառությունների և խոտհարքա արոտային շրջանառությունների արմատավորում, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքի բարելավում, կերերի արտադրության արդյունավետացում, միավոր տարածությունից հնարավոր առավելագույն քանակի և որակի կերեր արտադրելու համար:

Բարձրակարգ կերային մշակաբույսերի շրջանառություն, բնական կերային հանդակների բարելավում:

**20. ԱԳՐՈՎԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Ժամ 60**

**Կրեդիտ 2**

Ագրոկենսաբազմազանության հիմունքների պարզաբանում: ՀՀ տարածքում հաշվառված և նկարագրված կարևորագույն բուսատեսակների ագրոկենսաբանական, կարգաբանական, տնտեսական – կիրառական և սելեկցիոն նշանակությունները: Գեոնոբանկերի հարստացում և դրանցում պահպանվող բուսատեսակների օգտագործման հիմունքները:

**21. ԱՆՏԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐՏԵԶԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Ժամ 60**

**Կրեդիտ 2**

Հասկացողություն անտառի մասին: Անտառը, որպես բուսական ծածկույթի հիմնական տիպերից մեկը: Հասկացողություն անտառային ֆոնդի մասին: ՀՀ անտառային ռեսուրսները: Անտառպատվածություն: Անտառների հիմնական կատեգորիաները: Անտառը և էկոլոգիական գործոնները: Անտառը և կլիման: Անտառը և ջերմությունը: Անտառը և խոնավությունը: Անտառը և հողագրունտային պայմանները: Անտառային համակեցությունների ձևավորման և զարգացման օրինաչափությունները: Մաքուր և խառը ծառուտների առաջացումը, պարզ և բարդ ծառուտներ: Ծառուտների հասակային փոփոխությունները և կառուցվածքը: Ծառուտների կազմի փոփոխությունը և հերթափոխությունը անտառում: Անտառի կենսաէկոլոգիական և անտառտնտեսական հատկությունները: Անտառային ծառատեսակների աճման ու զարգացման առանձնահատկությունները, դրանց դասակարգումը: Հասկացողություն կցվածության և լրիվության, ծառուտի խտության և ծագման մասին: Անտառի տնտեսական հատկությունները՝ բոնիտետ, ապրանքայնություն, բնափայտի պաշար և այլն: Անտառի պահպանման, վերականգման և օգտագործման հիմնախնդիրները: Անտառի վերականգման եղանակները՝ սերմնային, վեգետատիվ: Անտառի հատումները, դրանց եղանակները: Տեսակների և սերունդների հերթափոխությունը անտառում: Անտառի տիպոլոգիա: Հասկացողություն կանաչապատման տիպերի և կատեգորիաների մասին: Կանաչապատման մեջ օգտագործվող հիմնական հասկացողությունները: Կանաչ տնկարկների տիպերը և կատեգորիաները: Ծառերի և թփերի զուգակցման կենսաբանական առանձնահատկությունները: Գեոլոգիական կոմպոզիցիաների ստեղծման սկզբունքները և առանձնահատկությունները տարբեր տիպի և կատեգորիայի կանաչ տնկարկներում:

**22. ԲՈՒՄԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ**

**ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**

**Ժամ 60**

**Կրեդիտ 2**

Որպես վերամշակման օբյեկտ բուսական հումքի բնութագիրը և որակի գնահատումը: հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի նախապատրաստման սկզբունքները, մեթոդներն ու գործընթացները; դրանց էությունը և արտադրության տարբեր ոլորտներում կիրառման առանձնահատկությունները: Բուսաբուծական արտադրանքի պահպանության սկզբունքները, մեթոդներն ու եղանակները; հացահատի-

կի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի պահպանության տեխնոլոգիաները: Հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի ու հատապտուղների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի վերամշակման տեխնոլոգիաները: պահածոյագործության և գինեգործության հիմունքները: կոմբինացված կերերի արտադրություն: Ստանդարտացման հիմունքները: հացահատիկի, լոբազգիների, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, մրգերի և հատապտուղների, շաքարի ճակնդեղի, տեխնիկական մշակաբույսերի, անասնակերերի, սերմնամուսերի և տնկանյութի ստանդարտացումը:

## **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ**

### **1. ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ժամ 330 Կրեդիտ 11**

Բուսաբուծությունը որպես գիտություն և գյուղատնտեսական արտադրության ճյուղ: Դաշտային մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները, տեսակային և սորտային կազմը, բերքի ձևավորման հիմնական օրինաչափությունները, առավել նվազագույն ծախսերով էկոլոգիապես անվտանգ, բարձր ու որակով բերքի ստացման տեսական հիմունքները և պրակտիկ միջոցառումները: Առանձին բույսերի մշակության տեխնոլոգիաները՝ դերը ցանքաշրջանառության մեջ, նախորդները, հողի մշակման և պարարտացման համակարգերը, ցանքի համար սերմերի նախապատրաստումը, ցանքի (սածիլման) առանձնահատկությունները, վեգետացիայի ընթացքում բույսերի նկատմամբ կիրառվող խնամքի ածխատանքները, առանձին մշակաբույսերի բերքի նախնական մշակումը և պահպանումը: Կիրառվող տեխնոլոգիաների առանձնահատկությունները ազարակային (ֆերմերային) տնտեսություններում:

### **2. ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՐՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ժամ 240 Կրեդիտ 8**

Պտղաբուծության կենսաբանական հիմունքները՝ պտղատու ծառերի անատոմիան և մորֆոլոգիան, պտղատու բույսերի աճի և պտղաբերման օրինաչափությունները, էկոլոգիական գործոնների դերը պտղատու տեսակների կյանքում, պտղատուների դասակարգումը, դրանց բուսաբանական և կենսաբանական առանձնահատկությունները, պտղատու և հատապտղատու տնկարան, այգիների հիմնում և պտղատուների արտադրության տեխնոլոգիան՝ այգու տեղի ընտրություն, հողի մշակման և խնամքի համակարգ, պարարտացում, ոռոգում, ծառերի ձևավորում և էտ, պտղատու և հատապտղատու տնկարկների վերանորոգում և վերականգնում, բերքահավաք, Հայաստանում տարածված պտղահատապտղային բույսերի սորտերի տնտեսատեխնոլոգիական բնութագրումը: Լաբորատոր - գործնական պարապմունքներ:

### **3. ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՐՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ժամ 240 Կրեդիտ 8**

Խաղողագործության կենսաբանական հիմունքները՝ խաղողի վազի անատոմիական և մորֆոլոգիական կառուցվածքը, վազերի աճի, զարգացման և պտղաբերման օրինաչափությունների, կենսաբանական ցիկլերը (հարաբերական հանգստի և վեգետացիայի ժամանակաշրջան), էկոլոգիական գործոնների դերը վազի աճման համար, խաղողի բերքի ստացման տեխնոլոգիան ամպելագրաֆիա և սելեկցիա, տնկարանի հիմնում և խնամք, խաղողի այգիների հիմնում (տեղի ընտրություն, տնկման սխեմաներ, վազի խնամքի և մշակման համակարգ, պարարտացում, ոռոգում, վազերի էտ և ձևավորում, թերաբժեք այգիների լրացում և վերականգնում, բերքահավաք) խաղողի մշակության առանձնահատկությունները ՀՀ խաղողագործության տարբեր գոտիներում: ՀՀ-ում

խաղողագործության մասնագիտացումը և սորտերի վերաբաշխումը: Լաբորատոր - գործնական պարապմունքներ:

**4. ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ** **ժամ 240** **Կրեդիտ 8**

Բանջարաբուծությունը որպես գյուղատնտեսական արտադրության կարևոր ճյուղ: Բանջարեղենի օգտագործման տարեկան սննդաբաժնի գիտական հիմնավորումը: Բաց դաշտի և պաշտպանված գրունտի բանջարաբուծության զարգացումը: Բանջարաբուստանային մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները, տեսակային և սորտային կազմը, նրանց բնութագրումը, նվազագույն ծախսերով, էկոլոգիապես անվտանգ, բարձր ու որակով բերքի ստացման տեսական հիմունքները և պրակտիկ միջոցառումները: Առանձին բույսերի մշակության տեխնոլոգիաները բաց դաշտում և փակ գրունտ, նրանց բերքատվության առանձնահատկությունները: Գիտության դերը բանջարաբուստանային մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաների կատարելագործման և նոր, արժեքավոր սորտերի ստացման գործում:

**5. ԲՈՒՅՍԵՐԻ ԲՋՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** **ժամ 120** **Կրեդիտ 4**

Բջիջը որպես կյանքի հիմնական միավոր: Պրոկարիոտ և էուկարիոտ օրգանիզմների էվոլյուցիան: Բուսական բջջի ուլտրակառուցվածքը և բջջի կառուցվածքային տարրերի դերը կենսական ցիկլում: Զրոմոսոմների կառուցվածքը, ֆունկցիան և դրանց բնորոշող առանձնահատկությունները: Բջջի բազմացման առանձնահատկությունները: Միկրոսպորոգենեզը և արական գամետոֆիտի զարգացումը: Մեգասպորոգենեզը և իգական գամետոֆիտի զարգացումը: Կրկնակի բեղմնավորումը, էնդոսպերմայի և սաղմի առաջացումը:

**6. ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԳՐՈՒՆՏԻ ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ** **ժամ 90** **Կրեդիտ 3**

Առարկան կազմված է երկու բաժնից:

1. պաշտպանված հիմնական կառույցների (սնկաբուծարանների) կառուցվածքային (կոնստրուկցիոն) համակարգերը և նրանց ջեռուցման էներգիախնայողության եղանակները, շահագործման առանձնահատկությունները, ագրոտնտեսական պահանջները:
2. առանձին բանջարանոցային մշակաբույսերի և ուտելի սնկերի (շամպինիոն, կախակն, կոլցեվիկ, տրյուֆել) տարբեր տեսակների մշակության ագրոտեխնոլոգիաները, ժամանակակից ֆիտոտրոպ կառույցները կուլտուր շրջանառությունների և շրջանակա-շրջանառությունների կազմակերպման և շուրջ տարին թարմ բանջարեղենով ապահովվման խնդիրը:

**7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄԱՄՆԱՎՈՐ ՄԵԼԵԿՑԻԱ ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱ** **ժամ 330** **Կրեդիտ 11**

Տարբեր մշակաբույսերի մասնավոր սելեկցիայի յուրահատկությունները: Յորենի մասնավոր սելեկցիա, նրա խնդիրներն ու առանձնահատկությունները: Յորենի սելեկցիայի մեթոդները, ելանյութի աղբյուրները: Գենետիկական ինժեներիայի կիրառման հեռանկարները ցորենի սելեկցիայում: Եզիպտացորենի մասնավոր սելեկցիան, մեթոդները, խնդիրները և ելանյութի աղբյուրները: Իմպրոդիցի կիրառումը եզիպտացորենի սելեկցիայում: Գարու մասնավոր սելեկցիան, խնդիրները և առանձնահատկությունները, ելանյութի աղբյուրները:

Կարտոֆիլի մասնավոր սելեկցիան, մեթոդները, անալիտիկ և կլոնային սելեկցիայի պատճառաբանվածությունը: Սինթետիկ սելեկցիա: Գենետիկական ինժեներիայի կիրառման անհրաժեշտությունը վիրուսազերծ սորտեր ստեղծելու աշխատանքներում: Շաքարի ճակնդեղի, ծխախոտի, բանջարաբոստանային մշակաբույսերի /պոմիդոր, բադրիջան, տաքդեղ, ձմերուկ, սեխ, վարունգ/ մասնավոր սելեկցիան, խնդիրներն և նրանց առանձնահատկությունները:

Խնձորենու, տանձենու, ծիրանենու, դեղձենու և խաղողի վազի սելեկցիայի մեթոդները, խնդիրները և ելանյութի աղբյուրները:

## **8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ԵՎ ՍԵՐՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Ժամ 120**

**Կրեդիտ 4**

Սերմնաբուծության բնորոշումը և խնդիրները: Սերմնաբուծության կազմակերպումը կախված մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկություններից և բազմացման ձևերից: Սերմնաբուծության բնագավառում կիրառվող մեթոդները: Սորտափոխում և սորտաթարմացում: Էլիտային սորտերի արտադրությունը: Սորտային և սերմնային հսկողություն:

Բարձրակարգ սերմանյութի դերը բերքատվության բարձրացման գործում: Սերմացուի բերքատու հատկանիշները, սորտային և ցանքային որակը, սերմանյութի որակի բուժազրոյնը, նրա նկատմամբ առաջադրվող պահանջները պետական ստանդարտով: Սերմնանյութի որակի բարելավման միջոցառումները:

## **9. ԲՈՒՅՍԵՐԻ ԻՍՈՒՆԻՏԵՏ ԵՎ ՀԵՏԵՐՈՉԻՍԱՅԻՆ ՍԵԼԵԿՑԻԱ**

**Ժամ 180 Կրեդիտ 6**

Հիվանդությունների և վնասատուների հանդեպ դիմացկուն /իմուն/ սորտերի և հիբրիդների ստեղծման անհրաժեշտությունը: Իմունիտետի տիպերը, դրանց էությունը: Իմուն սորտերի ստացման համար ելանյութի ընտրությունը սելեկցիայում: Հեռավոր հիբրիդիզացիա և մուտագենեզ: Կենսատեխնոլոգիա: Իմուն մշակաբույսերի ստեղծման մեթոդները:

Հետերոզիսի բնորոշումը, նրա տեսական և տնտեսական նշանակությունը: Հետերոզիսի հնարավոր մեխանիզմները, նրա ամրացման ուղիները, դիպլոիդ հիբրիդների փոխադրումը պոլիպլոիդ վիճակի: Եզիպտացորենի հետերոզիսային հիբրիդների ստացման փուլերը: Ցիտոպլազմատիկական արական ստերիլություն /ՑԱՍ/, նրա կիրառումը հետերոզիսային սելեկցիայում: Հետերոզիսի դրսևորման առանձնահատկությունները տարբեր մշակաբույսերի մոտ: Հետերոզիսային սերմնաբուծության առանձնահատկությունները տարբեր բույսերի մոտ:

## **10. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ**

**Ժամ 150**

**Կրեդիտ 5**

Կենսատեխնոլոգիայի նպատակը, խնդիրները, բնագավառները և նվաճումները: Կենսատեխնոլոգիայի մեթոդները: Գենային ինժեներիան որպես գենետիկական ինժեներիայի բաղկացուցիչ մաս: Գենային ինժեներիայի մոլեկուլային հիմունքները /գենի սինթեզը, անջատումը դոնորի օրգանիզմից, հիբրիդային ԴՆԹ-ի ստացումը և ներածումը ռեցիպիենտի օրգանիզմ: Գենետիկական ինժեներիան բուսաբուծության մեջ: Բջջային ինժեներիա՝ հյուսվածքների և բջիջների կուլտիվացիայի կենսաբանական առանձնահատկությունները, in vitro մեթոդի կիրառումը բույսերի սելեկցիայում, բույսերի միկրոկլոնալ բազմացումը: Սոմատիկ հիբրիդացում: Տրանսենոզ: Միկրոօրգանիզմների օգտագործումը կենսատեխնոլոգիայում:

**11. ՄՈՒՏԱԳԵՆԵԶ ԵՎ ՄՈՒՏԱՑԻՈՆ ԱՆԱԼԻԶ**

**Ժամ 90**

**Կրեդիտ 3**

Մուտացիոն փոփոխականության վերաբերյալ Գ.Դեֆրիզի տեսությունը: Մուտագենեզ և մուտացիոն գործոններ /քիմիական, ֆիզիկական, կենսաբանական/: Մուտացիաների դասակարգումը՝ ինքնաբեր /սպոնտան/ և ինդուկցված /արհեստական/: Գենոմային, քրոմոսոմային և գենային մուտացիաները: Արհեստական մուտագենեզը բույսերի և միկրոօրգանիզմների սելեկցիայում: Արհեստական մուտագենեզի ժամանակ կիրառվող մուտագեն գործոնները՝ քիմիական և ֆիզիկական: Բույսերի սելեկցիայի սկզբունքները արհեստական մուտագենեզի ժամանակ և մուտացիայի արդյունքների վերլուծության մեթոդները:

**12. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՈՒՏԱԳԵՆԵԶ ԵՎ ՄՈՒՏԱՑԻՈՆ ՍԵԼԵԿՑԻԱ**

**Ժամ 60 Կրեդիտ 2**

Մուտացիոն փոփոխություն: Ֆիզիկական մուտագեններ՝ ռադիոակտիվ ճառագայթներ, գամմա ճառագայթներ, ռենտգենյան ճառագայթներ, նեյտրոններ, բետտա ճառագայթներ: Քիմիական մուտագեններ՝ էթիլեն իմին, HEM, HMM, դիմեթիլսուլֆատ: Փորձարարական մուտացիներ՝ գենային և քրոմոսոմային:

**13. ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱ**

**Ժամ 120 Կրեդիտ 4**

Հասկացություն ժառանգականության և փոփոխականության մասին: Բույսերի գենետիկական և սելեկցիան: Հետերոզիս, էքսպերիմենտալ պոլիպլոիդա, ինդուկցված մուտացիաների ստացումը ռադիացիայի և քիմիական նյութերի ազդեցության ներքո, ժառանգականության բջջաբանական և մոլեկուլային հիմունքներ, հատկանիշների ժառանգական օրինաչափություններ, ժառանգականության քրոմոսոմային տեսություն, սեռի և պոպուլյացիայի գենետիկա, օնթոգենեզի գենետիկա, հետերոպլոիդա, մուտացիոն փոփոխականության բաժին:

**14. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱՌԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱ ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱ**

**Ժամ 106 Կրեդիտ 4**

Անտառային ծառատեսակների նոր սորտերի և հիբրիդների ստեղծում: Ելանյութի ընտրություն՝ համաշխարհային գենոֆոնդի ներգրավմամբ: Սելեկցիոն նյութի գնահատման մեթոդները: Սելեկցիոն աշխատանքների կազմակերպման տեխնիկան: Անտառաբույսերի բարձրակ սերմերի արտադրության մեթոդները: Անտառային բույսերի նոր ձևերի ստեղծման գործում համաշխարհային սելեկցիայի նվաճումները:

4.1. Առկա ձևով ուսուցման դեպքում լսարանային պարապմունքներին պետք է տրամադրվի յուրաքանչյուր ուսումնական դասընթացին հատկացվող ժամաքանակի 50%-ից ոչ պակասը, իսկ հեռակա ձևով ուսուցման դեպքում՝ 10%-ից ոչ պակասը:

**310105 - ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱ ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԹՕԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ:**

5.1. Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետը, ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 242 շաբաթ է, որից՝  
- տեսական ուսուցում՝ 150 շաբաթ

- քննաշրջանները՝ 27 շաբաթ
  - ուսումնական պրակտիկա՝ 5 շաբաթ,
  - արտադրականը պրակտիկա՝ 10 շաբաթ
  - նախադիպլոմային պրակտիկա՝ 5 շաբաթ
  - եզրափակիչ պետական որակավորումը ներառյալ ավարտական /դիպլոմային/ աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը՝ 10 շաբաթ
  - արձակուրդներ՝ 35 շաբաթ:
- Դիպլոմային աշխատանքի կատարման ժամանակացույցը, ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է համալսարանը, որը հաստատում է գիտական խորհուրդը:
- Դիպլոմային աշխատանքի թեման տրվում է և ղեկավարը նշանակվում է ամբիոնի կողմից, ամբիոնի նիստի որոշմամբ:

5.2 Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձանց համար գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի յուրացման ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում են մինչև մեկ տարի՝ սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2-ով սահմանված ժամկետի նկատմամբ:

5.3 Ուսանողի ուսումնական բեռնվածքի առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ, ներառյալ լսարանային, արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4 Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 30 ժամ: Նշված ծավալում չեն ընդգրկվում ֆիզիկական կուլտուրայի և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է :

5.5 Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան 160 ժամից ոչ պակաս ծավալով դասախոսների հետ պարապմունքներ անցկացնելը:

5.6 Ուսումնական տարվա արձակուրդները պետք է լինեն 7-10 շաբաթ, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս՝ ձմեռային քննաշրջանից հետո:

6.310105 -- ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵԼԵԿՏԻԱ ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ

**ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ:**

6.1. **Գյուղատնտեսության բակալավրի** պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակմանը ներկայացվող պահանջները.

6.1.1. Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա ԲՈՒՀ-ն ինքնուրույն է մշակում և հաստատում **գյուղատնտեսության բակալավրի** պատրաստման հիմնական կրթական ծրագիրը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնառությունը պարտադիր է, իսկ նրանց ցանկը երաշխավորական բնույթ է կրում, որը ԲՈՒՀ-ը կարող է փոփոխել կամ լրացնել:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն) և ծավալները՝ դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է ԲՈՒՀ-ը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25%-ից:

Ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է ԲՈՒՀ-ը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով, այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացից և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակի ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40%-ը ձևավորվում է ընթացիկ առաջադիմությամբ և միջանկյալ ստուգումներով, իսկ 60%-ը՝ եզրափակիչ քննության արդյունքներով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր կամ գրավոր-բանավոր է

Բացառության կարգով ԲՈՒՀ-ը կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց դրանք չպետք է գերազանցեն քննությունների ընդհանուր քանակի 25%-ը: ԲՈՒՀ-ի իրավունքն է ուսումնական դասընթացի ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտրությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտագործում է իրեն նպատակահարմար գնահատման սանդղակ: Միջազգային մասնագիտական կրթական համակարգին ինտեգրվելու և ուսանողների ակադեմիական շարժունակությունն ապահովելու նպատակով գործընթացում գերադասելի է գիտելիքների ստացման և գնահատման վարկային (կրեդիտային) համակարգի ներդրումը և օգտագործումը: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելու դեպքում անհրաժեշտ է անցնել գիտելիքների գնահատման ավանդական համակարգին «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար», «ստուգված», «չստուգված»:

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես առարկայի ուսումնական բաղադրիչ և իրականացվում է այդ առարկային հատկացված դասաժամերի հաշվին: Հիմնական մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքի կատարելը պարտադիր է, բայց ուսուցման ողջ շրջանում դրանք չպետք է գերազանցեն 5-ը:

Մասնագիտության ուսումնական պլանով (հավելված 2 ) նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

Մասնագիտացման դասընթացների կրթաբլոկը ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկի տրամաբանված հաջորդականությունն է, որը ընտրած մասնագիտությամբ նախատեսված գործունեության բնագավառներում նպաստում է ուսանողի խոր մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: ԲՈՒՀ-ը պետական կրթական չափորոշիչի հավելված 1-ում տրված ցանկից ինքնուրույն է ընտրում իրեն համա-

պատասխանող մասնագիտացումը և իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու մասնագիտացման դասընթացների ցանկը, կամ էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչը մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած՝ ձևավորելու նոր մասնագիտացում:

Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբյուջի ցանկը նույնպես երաշխավորական բնույթ է կրում և ուսանողի համար պարտադիր չէ, իսկ դրանց հաճախելու դեպքում կրթաբյուջին հատկացրած ժամաքանակների 30%-ին վերաբերվող դասընթացներից պարտադիր է ուսանողների գիտելիքներիստուգումը և գնահատումը:

6.1.2. Մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում ՀԳԱ-ն իրավասու է՝

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբյուջեներին հատկացրած ժամաքանակները, առանձին դեպքերում մինչև 10%-ի սահմաններում:
- ձևավորել հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթաբյուջ, որի հանրապետական բաղադրիչում նշվածներից պարտադիր է հետևյալ դասընթացների առկայությունը՝

«Ֆիզիկական կուլտուրա »  
«Հայ ժողովրդի պատմություն»,  
«Հայոց լեզու և գրականություն»,  
«Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ»,  
«Օտար լեզու»  
«Փիլիսոփայություն»:

Մնացած դասընթացները կարող են ընդգրկվել ըստ բուհի հայեցողության: Այս դեպքում հնարավոր է նրանց միջդասընթացային միավորումը՝ բովանդակության պարտադիր նվազագույնի պահպանմամբ:

Եթե դասընթացն ընդհանուր մասնագիտական կամ մասնագիտացման դասընթացների կրթաբյուջի մի մասն է կազմում դրա համար հատկացված ժամերը վերաբաշխվում են ՀՍՏ դասընթացների վրա:

Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները հեռակա և դրսեկության ձևերով ուսումնառող ուսանողների համար կարող են իրականացվել նրանց ցանկությամբ:

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ՀՍՏ դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, անհատական և կոլեկտիվ գործնական պարապմունքների, առաջադրանքների և սեմինարների ձևով՝ բուհի մշակած ծրագրերով, հաշվի առնելով բուհի մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունը և հակումները, որոնք կապահովեն կրթաբյուջի դասընթացների թեմատիկայի լուսաբանումը ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան,
- սահմանել ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸԲ) կրթաբյուջեներում ընդգրկված դասընթացների առանձին բաժինների դասավանդման անհրաժեշտ խորությունը, կրթաբյուջեների դասընթացների ուղղվածությունը համապատասխան և մասնագիտության առանձնահատկությունների հաշվառմամբ: ԸՄ կրթաբյուջում պարտադիր է «Բաղ. պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդումը: Բուհական բաղադրիչներին առանձնացված ժամաքանակները բուհի հայեցողությամբ կարող են օգտագործվել հանրապետական բաղադրիչներում ընդգրկված դասընթացների ավելի խորը դասավանդման համար,
- իրականացնել գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտությամբ գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը կրճատված ժամկետով՝ համապատասխան ուղղվածության միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար: Ուսուցման ժամկետների կրճատումը կատարվում է մասնագիտական կրթության նախորդ աստիճանում ուսանողների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների և հմտությունների հիման վրա: Այդ դեպքում ուսուցման տևողությունը 2 (երկու) տարուց պակաս չպետք է լինի:



Կրճատված ժամկետով ուսուցումը թույլ է տրվում նաև այն անձանց, որոնց կրթական մակարդակը և բացառիկ ընդունակությունները բավարար հիմք են նման ուսուցում իրականացնելու համար;

- առանձին դեպքում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտության համար բուհն իրավունք ունի մինչև 20%-ի սահմանում փոփոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբյուջեի ժամաքանակը, իսկ առանձին դասընթացները՝ մինչև 40%-ի սահմաններում:

**6.2 Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները:**

**Գյուղատնտեսության բակալավրի** պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք, որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթության (առնվազն դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս) և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում) կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորա-դասախոսական կազմի 50%-ից ոչ պակաս: Հիմնական հաստիքային դասախոսները և 0,25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները նույնպես պետք է կազմեն ընդհանուրի 50%-ից ոչ պակաս:

**6.3 Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները:**

Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական աշխատանքների կատարում, համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ: Պարտադիր պահանջ է նաև ինֆորմացիոն բազայի ստեղծում, ուսանողի մուտքը տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ, ներառյալ ինտերնետը:

Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցումների առկայությամբ, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով: ԲՈՒՀ –ի գրադարանը պետք է լինի հագեցված մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ և չափորոշիչներով:

**6.4 Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները:**

Նյութատեխնիկական բազան պետք է համապատասխանի գործող սանիտարահիգիենիկ նորմերին, ապահովի օրինակելի լաբորատոր-գործնական պարապմունքների և ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

**6.5 Պրակտիկաների կազմակերպման պահանջները:**

Առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտության գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով, բնագավառի տարբեր կազմակերպություններում և հաստատություններում կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաներ: Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչ է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կազմակերպվում է այն հաշվով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած

փորձառությունը օգտագործել իր դիպլոմային աշխատանքը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկացումը, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Արտադրական և ուսումնական պրակտիկան կարելի է կազմակերպել նաև որոշակի կազմակերպություններում, ակադեմիայի ուսումնափորձնական տնտեսություններում՝ նախապես կազմված անհատական ծրագրերով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում ակադեմիայի ուսումնափորձնական տնտեսություններում:

## **7. 310105 - Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտությամբ շրջանավարտի պատրաստման մակարդակին ներկայացվող պահանջները:**

7.1 Շրջանավարտը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2. կետում նշված որակավորմանը համապատասխանող խնդիրները:

Գյուղատնտեսության բակալավորը պետք է.

ա / *հումանիտար և սոցիալ-տնտեսական գիտելիքների բնագավառում իմանա* ՀՀ - Սահմանադրությանը և իր բնագավառի օրենքները;

- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին /գրավոր և բանավոր/ հաղորդակցվի երկու օտար լեզուներով;

- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին;

- իմանա հայ ժողովրդի պատմությունն և արդի քաղաքագիտական զարգացումները;

- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա դրա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները: Ծանոթ լինի փիլիսոփայական ուղղություններին;

- գիտենա հոգեբանության և մանկավարժության տարրերը;

- գիտենա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրո- և միկրո տնտեսության առանձնահատկությունները :

բ/ *բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում.*

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին, և հայեցակարգին բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին;

- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժիններին, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին մաթեմատիկական մոդելավորման եղանակներին;

- տիրապետի համակարգչային տեխնիկային և կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաները;

գ/ *մասնագիտական գործունեության բնագավառում՝*

- ունենա տեսական ու գործնական բարձր պատրաստականություն, լավ տիրապետի կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների նվաճումներին, որոնք անհրաժեշտ են երկրագործության արդյունավետ վարման, նոր սորտերի ստացման և ներդրման, սերմնաբուծության կազմակերպման, գյուղատնտեսական մշակաբույսերից բարձր և կայուն բերքի ապահովման համար;

- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ;

- տիրապետի ընդհանուր կենսաբանական առարկաների /բուսաբանություն, բջջաբանություն, բույսերի ֆիզիոլոգիա, էվոլյուցիոն տեսություն, կենսաքիմիա, մանրէաբանություն, գենետիկա և այլն/: Մասնագիտական առարկաներ/երկրագործություն, հողագիտություն, բուսաբուծություն, բանջարաբուծություն, սելեկցիա և սերմնաբուծություն, սորտագի-

տություն, գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա և այլն/, որոնք անհրաժեշտ են սելեկցիոն գենետիկական և սերմնաբուծական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար;

- բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու գիտական և ուսումնական հաստատություններում և գյուղատնտեսական արտադրության մեջ;

Գյուղատնտեսության բակալավրի հատուկ պատրաստությանը վերաբերվող պահանջները բխում են մասնագիտացման կրթաբլոկի բովանդակությունից և տվյալ մասնագիտացմամբ մասնագետներ պատվիրած կազմակերպության գործառնություններից:

Նշված փորձառությունները ներառում են՝

- հետազոտական աշխատանք վարելու, վերացական տրամաբանական մտածողության ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները կիրառելու և քննադատական վերլուծության ունակություններ,

- անձանոթ պայմաններում առաջացած ոչ կոնստրուկտիվ հիմնահարցերի բացահայտման, հաղթահարման և վերջնական լուծման, սեղմ ժամանակացույցով աշխատանքներ կազմակերպելու ընդունակություն;

- մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների նկատմամբ ընկալունակության ցուցաբերում:

Գյուղատնտեսության բակալավրի՝ մարդկանց հետ աշխատելու փորձառությունը ենթադրում է նրա ունակությունները՝

- այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու;

- խնդիրները ձևավորելու և դրանք ենթականերին պատվիրակելու;

- ստեղծագործական աճի ձգումը խրախուսելու և զարգացումն ապահովելու;

- ծագած տարաձայնությունները և բախումները լուծելու;

- տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու;

- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու;

- տարաբնույթ և տարասեր մշակութային միջավայրերում աշխատելու և այլն:

Գյուղատնտեսության բակալավրի ինֆորմացիայի հետ աշխատելու փորձառությունը պահանջում է պարտադիր հմտություններ՝

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու;

- լեզվային և մշակութային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծորեն ընկալելու;

- բանավոր, տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիան որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

### **Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով**

Գյուղատնտեսության բակալավրը պետք է ծանոթ լինի տվյալների մշակման երկուսից ոչ պակաս համակարգերի, համակարգչային և բազմաօգտագործման տեղային ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (WWW), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

Գյուղատնտեսության բակալավրը պետք է հասկանա իր մասնագիտության էությունը և սոցիալական նշանակությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետբուհական և լրացուցիչ կրթություն ստանալու կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

**7.2 Գյուղատնտեսության բակալավրի եզրափակիչ պետական որակավորման պահանջները՝**

**7.2.1 Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա մասնագիտությամբ**

**Գյուղատնտեսության բակալավրի** եզրափակիչ պետական որակավորումը ներառում է՝ ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պաշտպանությունը և պետական քննության հանձնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական և գործնական պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

**7.2.2 Գյուղատնտեսության բակալավրի** ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքն ավարտուն մի մշակում է, որը կատարված է մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և նպատակ ունի ամրապնդել և ընդլայնել շրջանավարտի տեսական և գործնական գիտելիքները: Թեմայի բնույթից կախված այն ընդգրկում է գենետիկայի, նոր տորտերի ստացման ու նրանց համեմատական ուսումնասիրության և սելեկցիայի հետ առնչվող այլ հարցեր:

Բովանդակային առումով ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքը պետք է՝

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսագիտական կամ փորձարարական հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ;
- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական և համակարգային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ բնագավառի հիմնահարցերի լուծման, կատարելագործման վերաբերյալ;
- կրի ստեղծագործական բնույթ՝ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ;
- բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու գիտական կենտրոններում, ինստիտուտներում, բուհերում, գյուղատնտեսության արտադրության ոլորտներում;
- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա;
- արտացոլի շրջանավարտի ունակությունը օգտագործելու տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատել բնագավառի նորմատիվ-իրավական ակտերի հետ;
- ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվության բնորոշ կառուցվածք և 50-60 էջ համակարգչային շարվածքի ծավալ:  
Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքների թեմատիկական սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն՝ **սելեկցիայի, սերմնաբուծության և գենետիկայի** առաջատար և հրատապ հարցերը, հաշվի առնելով բուհի (ֆակուլտետի) ընտրած մասնագիտացումները և ընտրովի դասընթացների բովանդակությունը ըստ կրթաբլոկների:
- Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի կառուցվածքում պետք է ներառվեն հետևյալ բաժինները՝
- ներածություն;
- դաշտայինփորձերի դեպքում, տվյալ տարածքի հողակլիմայական պայմանները;
- ուսումնասիրվող մշակաբույսի բուսաբանական և կենսաբանական առանձնահատկությունները;
- գրական ակնարկ դիպլոմային աշխատանքի թեմայի շուրջը;
- փորձարարական մաս (փորձի պայմանները, սխեման և մեթոդիկան);

- փորձի արդյունքների վերլուծությունը, կապված թեմայի բնույթից նաև տնտեսակն արդյունավետությունը;
- աշխատանքի պաշտպանության հարցեր;
- ընդհանուր եզրակացություններ և առաջարկություններ;
- օգտագործած գրականության ցանկը;
- հավելված (անհրաժեշտության դեպքում):
- 

**7.2.3. Պետական քննությանը ներկայացվող պահանջները.**

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատում բուհի գիտական խորհուրդը: Նրանում պարտադիր կարգով ներառվում են հարցեր մասնագիտության հետևյալ հիմնական ուսումնական դասընթացներից՝

*Գյուղատնտեսական մշակաբույսերի ընդհանուր սելեկցիա*

*Գյուղատնտեսական մշակաբույսերի մասնավոր սելեկցիա և զենետիկա*

*Բույսերի զենետիկա*

*Գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծություն*

*Բույսերի ինունիտետ և դիմացկունության սելեկցիա*

